133 թ., պաշարեց Մալաթիա, աւերեցնորա պարիսպները եւ նորանում ապրող մուսլիմներին փոխադրեց Միջագետք։ Իջեւանելով Հոջէ Մորջոոմ,[1] նա առաջ ուղարկեց Հայ Կուտանին, որ եկաւ եւ պաշարեց Կարին քաղաքը մի քանի օր. այստեղ կը կառավարէր Աբու Կարիմս։ Հայ բնակիչներից երկու եղբայր, ծակելով պարիսպը, գնացին Կուտանի մօտ եւ նորան քաղաք մտցրին։ Կուտան տիրեց քաղաքին, սպանեց, գերեց, աւերեց եւ տարաւ ինչ որ կարողացաւ յափշտակել անհաւատի համար, իսկ գերեալներին բաժանեց իւր ընկերների մէջ։

Ալ-Վակիդին պատմում է, որ ալ-Մանսուր[2] 139 թ. գնեց գերութիւնից Կարինի բնակիչներից նոցա, որոնք դեռ կենդանի էին, շինեց քաղաքը, ծաղկեցրեց, վերստին բնակեցրեց այնտեղ գերութիւնից գնածներին եւ բերել աւեց Միջագետքից եւ այլ տեղերից քաղաքի համար մի գունդ զօրք։ Երբ Յունաց կայսրը արշաւեց Կարինի վերայ ալ-Մուտասիմ Բիլլահի ամիրապետութեան ժամանակ,[3] նա սկսեց քաղաքի պարիսպը քարկոծել, այնպէս որ քիչ էր մնացել նա փուլ գար. ալ-Մուտասիմ ծախսեց նորան ամրացնելու համար 500.000 դրամ։

Կարին առնելուց յետոյ Հաբիբ գնաց բանակեցաւ Մարբալայում.[4] այստեղ նորա մօտ եկաւ

---

1 Հացեաց դրախտ ի Տարօն։

2 Աբու Ջաֆար ալ-Մանսուր ամիրապետը (754–775)։

3 833–842. Օգտուելով խալիֆութեան թուլութիւնից սորա օրերով Յոյները յարձակողական դիրք բռնեցին Փոքր Ասիայում. վերյիշեալ դէպքը պէտք է տեղի ունեցած լինի 838 թ.

4 مربالا, مريالا. Թերեւս ուղղելու է مردالا = Մարդաղէ ի Տուրուբերան։